

---

## ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱՅԻՆ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԵՂՆԱՐԿԱԾ ՔԱՅԼԵՐԸ (1920 թ.)

### ԷՌԻՏԱ ԳՅՈՅԱՆ

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտը նոր էջ բացեց միջազգային հարաբերությունների համակարգում: Պատերազմի ավարտից հետո ստեղծվեց առաջին միջազգային կազմակերպությունը՝ Ազգերի լիգան, որի նպատակն էր խաղաղություն ապահովել ողջ աշխարհում: Ակնհայտ էր, որ բոլոր պետությունները ձգտելու էին անդամագրվել այս նոր կառույցին. բացառություն չէր նաև Հայաստանի նորանկախ Հանրապետությունը:

Ազգերի լիգայի կանոնադրության 1-ին հոդվածը նոր պետությունների անդամագրության համար առաջադրում էր հետևյալ պայմանները. «Յուրաքանչյուր պետություն՝ դոմինիոն կամ գաղութ, որը կառավարվում է ազատ, և որը նշված չէ Կանոնադրության հավելվածում, կարող է դառնալ Ազգերի լիգայի անդամ, եթե նրա անդամությանը կողմ է արտահայտվում Վեհաժողովի երկու երրորդը, և տվյալ երկիրը իրական երաշխիքներ է ներկայացնում իր կողմից ստանձնած միջազգային պարտավորությունները պահպանելու, գինված ուժերի, ցանքային, ջրային և օդային սպառագինությունների վերաբերյալ լիգայի կանոնակարգն ընդունելու իր անկեղծ մտադրությունների վերաբերյալ»<sup>1</sup>: Սակայն արդյո՞ք այս պայմանները բավարար էին անդամության հայտը ընդունելու համար, արդյո՞ք լիգան չէր կարող մերժել երկու մուտքն իր կառույց քաղաքական կամ որևէ այլ նկատառումով: Պարզվում է՝ կարող էր: Ցավոք, մերժումը վերաբերեց նաև Ազգերի լիգային անդամության հայտ ներկայացրած Հայաստանի առաջին Հանրապետությանը:

1920 թ. մայիսի 13-ին Փարիզում հայկական ազգային պատվիրակության նախագահ Ավ. Ահարոնյանը հեռագիր է հղում Ազգերի լիգայի խորհուրդ՝ խնդրելով Հայաստանի Հանրապետությունն ընդունել որպես Ազգերի լիգայի անդամ: Նա նաև հայտնում է, որ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է կատարել լիգայի բոլոր հանձնարարությունները<sup>2</sup>: Իր պատասխան հեռագրում լիգայի գլխավոր քարտուղարը տեղեկացնում է, որ նոր անդամների ընդունելությունը որոշում է ոչ թե Ազգերի լիգայի խորհրդը, այլ կազմակերպության Վեհաժողովը, և, բացի այդ, խնդրում է իրեն ուղարկել Հայաստանի Հանրապետության կառավարության պաշտոնական դիմումը, որը և պետք է ներկայացվեր Վեհաժողովին: 1920 թ. սեպտեմբերի 25-ին հայկական պատվիրակության նախագահն արդեն

<sup>1</sup> Колъский А. Лига Наций. М., 1934, с. 30.

<sup>2</sup> Տե՛ս Բարսեգов Ю. Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества: Документы и комментарии. Том 1. М., 2002, էջ 507:

դիմում է Ազգերի լիգայի նախագահին. «Քանի որ ստորագրվել է Սկրի պայմանագիրը, որով դաշնակից պետությունները վերջնականապես ճանաչել են Հայաստանի Հանրապետության անկախությունը, խնդրում ենք վերջինիս ընդունել որպես Ազգերի լիգայի անդամ»<sup>3</sup>:

Հայկական պատվիրակության դիմումին ի պատասխան՝ Ազգերի լիգայի տարբեր հանձնաժողովներ մի շարք տեղեկություններ են խնդրում հայկական բանակի, նավատորմի, օդանավերի և օդագնացության, Հայաստանի Հանրապետության սահմանների նասին, ինչպես նաև Ազգերի լիգայում Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչների նասին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ազգերի լիգան հետամուտ էր պետությունների բանակների թվակազմի կրծատմանը, անհրաժեշտ էր բացատրել Հայաստանի Հանրապետության համար մեծ թվով բանակ պահելու անհրաժեշտությունը: Ահարոնյանը հայկական բանակի գինծառայողների թիվը նվազեցնելու անցանկալիությունը հանրապետության համար բացատրում է հետևյալ կերպ:

ա) Հայաստանը շրջապատող թշնամիները դեռ չեն գինաթափվել,

բ) Սկրի պայմանագիրը դեռևս իրագործված չէ<sup>4</sup>:

Ազգերի լիգայի խորհուրդը հոկտեմբերի 20-ի բրյուսելյան նիստում քննարկում է Հայաստանի Հանրապետության անդամության հարցը և հայկական պատվիրակության ներկայացրած տվյալները: Ստացված տեղեկությունների հիման վրա Ազգերի լիգային կից մշտական ռազմական հանձնաժողովը տալիս է հետևյալ եզրակացությունը. «Հայաստանի ռազմական ուժերը ներկայումս կազմում են 35.000 մարդ: Երկրի քաղաքական և աշխարհագրական վիճակը այնպիսին է, որ կառավարությունը ի վիճակի չէ ներկայացնել որևէ հստակ որոշում իր ապագա ռազմական կարգավիճակի վերաբերյալ»<sup>5</sup>: Հաշվի առնելով երկրի իրավիճակը՝ հանձնաժողովը առաջարկում է պահպանել հայկական բանակի հանակազմի թիվը: Ինչ վերաբերում էր ծովային ուժերին, ապա Հայաստանը ծով չուներ, հետևաբար չեր կարող ունենալ նաև ծովային ուժեր: Օդային ուժից Հայաստանը ուներ 5 ինքնաթիռ, որոնց պահպանումը հանձնաժողովը նույնպես համարում է անհրաժեշտություն:

Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև անդամության հայտներկայացրած այլ պետությունների վերաբերյալ ռազմական հանձնաժողովի որոշումները ընդգրկվում են Ազգերի լիգայի Վեհաժողովի օրակարգ: Ազգերի լիգայի անդամության թեկնածությունների քննության համար նշանակվում է 36 հոգանոց հատուկ հանձնաժողով (5-րդ հանձնաժողովը՝ Զիլիի պատվիրակ Դոն Անտոնիո Ջյունեուսի նախագահությամբ: Հանձնաժողովը իր առաջին նիստը գումարում է 1920 թ. նոյեմբերի 20-ին՝ իր աշխատանքները բաժանելով 3 ենթահանձնաժողովների միջև, որոնք յուրաքանչյուր թեկնածություն պետք է ուսումնասիրեին հետևյալ տեսակետներից.

<sup>3</sup> Nercessian V. Armenia and the League of Nations; reprint of hajgazian armenological review, Beirut, 1993, p. 217.

<sup>4</sup> Տե՛ս ՀԱԱ, §. 200, գ. 2, գ. 93, թ. 467:

<sup>5</sup> League of Nations Archives (այսուհետև՝ LNA), Minutes of the Commissions, "Military, naval and air conditions of the States, which have asked to be admitted to the League of Nations".

ա) արդյո՞ք անդամության պահանջը (հայտը) ներկայացված է պատշաճ կերպով,

բ) անդամության հայտ ներկայացրած երկրի կառավարությունը ինչպիսի՞ ճանաչում ունի (դե ֆակտո՞, թե՞ դե յուրե),

գ) արդյո՞ք թեկնածու երկիրը ունի կայուն կառավարություն, որը ներկայացնում է ողջ բնակչությանը, և հստակ սահմաններ, որքան տարածք ու բնակչություն ունի,

դ) արդյո՞ք երկիրը կառավարվում է ազատ,

Ե) ինչպիսի՞ն է երկրի վերաբերմնաքը (խոսքով և գործով) իր ստանձնած միջազգային պարտավորությունների և զինուժին վերաբերող Ազգերի լիգայի պահանջների նկատմամբ<sup>6</sup>:

Վրաստանի, Հայաստանի, Աղոթեցանի, Ուկրաինայի և Կոստա-Ռիկայի անդամության հարցերը հանձնվում են հանձնաժողովի 3-րդ ենթահանձնաժողովին, որի նախագահն էր Ֆրիտյոֆ Նանսենը (Նորվեգիա): Հայաստանի Հանրապետության անդամության հարցի վերաբերյալ 3-րդ ենթահանձնաժողովի գեկույցը քննարկվում է 5-րդ հանձնաժողովի դեկտեմբերի 1-ի նիստում: 3-րդ ենթահանձնաժողովը քննարկել էր Հայաստանի դիմումը և գտել, որ այն համապատասխանում է առաջադրված պայմաններին. «Երևանի հայկական հանրապետությունը կազմավորվել է 1918 թ. մարտին: Կասկած չկա, որ կառավարությունը ներկայացնում է հայ ժողովրդին, թեպետ կայուն համարվել չի կարող: Երկիրը դեռևս գրավոր Սահմանադրություն չունի, սակայն նախագծի քննարկումը հետաձգվել է մինչև Սահմանադրի ժողովի գումարումը»<sup>7</sup>: Սահմանների վերաբերյալ թեև նշված էր, որ հստակորեն ամրագրված չեն, սակայն Սկրի պայմանագրի 52-րդ հոդվածը արրիտրաժ էր ենթադրում, և Վիլսոնը ընդունել էր միջնորդի դերը: Ենթադրելով, որ Վանի, Բիթլիսի, Էրզրումի և Տրավոհոնի վիլայեթները միացվելու են Հայաստանի Հանրապետությանը, ապա վերջինիս տարածքը կղառնա 214 հզ. ք/կմ, իսկ բնակչության թիվը՝ մոտ 2.159.000: Ինչ վերաբերում էր միջազգային պարտավորությունների հանդեպ Հայաստանի Հանրապետության վերաբերմնաքին, ապա, ըստ ենթահանձնաժողովի, Հայաստանի Հանրապետության կառավարության դիրքորոշումը լիովին վստահություն է ներշնչում, որ վերջինս կատարում է իր խոսքը: Հայաստանի ճանաչման վերաբերյալ գեկույցը փաստում էր, որ հայկական պատվիրակության պնդմանը դաշնակից պետությունները դեյլուրել են Հայաստանի Հանրապետությունը, քանի որ վերջինս Սկրի պայմանագիրը ստորագրած պետություններից մեկն էր: Համաձայն քարտուղարությանը հասած ոչ պաշտոնական տվյալների՝ ԱՄՆ-ը, Արգենտինան նույնական է յուրե ճանաչել են Հայաստանը: Զեկույցի վերջում նշված էր, որ Հայաստանը հարուստ է հանքանյութերով, ունի արդյունաբերական լուրջ հնարավորություններ:

Ահա այսպիսին էր 3-րդ ենթահանձնաժողովի գեկույցը Հայաստանի մասին: Հատկանշական է, որ ենթահանձնաժողովի գեկույցը միանշանակ

<sup>6</sup> Steu Mandelstam A. La Societe de Nations and les Puisance devant la problem Armenienne Beirut, 1957,էջ 112-113:

<sup>7</sup> LNA, Report of the Sub-Committee V c.

չեր: Ենթահանձնաժողովի նախագահ Նանսենը գեկույցի վերջում եզրակացնում էր, որ թեև Ենթահանձնաժողովը միաձայն էր հայ ժողովրդի հանդեպ համակրանքի հարցում, սակայն որոշ հարցեր մնում էին առկախ:

Նանսենից հետո ելույթ է ունենում Բրազիլիայի պատվիրակ Օկտավիոն, որը նախ նշում է, որ իր երկիրը դե յուրե ճանաչել է Հայաստանը, որը ներառված է նաև Ազգերի լիգայի կանոնադրությունը ստորագրած պետությունների ցուցակում, և, բացի այդ, Հայաստանը ստորագրել է փոքրանասնությունների պաշտպանության վերաբերյալ կանոնադրությունը: Պատվիրակի նշած այս փաստերը նպատակ ունեին համոզելու, որ Հայաստանը դե յուրե ճանաչված պետություն է: Ելույթով հանդես են գալիս նաև Ֆրանսիայի և Շունաստանի ներկայացուցիչները, որոնք նույնպես կողմ են արտահայտվում Հայաստանի ընդունելությանը: Հայաստանի անդամության հարցի վերաբերյալ իր կասկածներն է արտահայտում Հարավաֆրիկյան Հանրապետության ներկայացուցիչ Լորդ Ոոբերտ Սեսիլը, ըստ որի՝ Հայաստանի անդամակցությունը Ազգերի լիգային չեղյալ կդարձներ նախկինում հայկական խնդրի վերաբերյալ առաջարկված լուծումը, որով Հայաստանը պետք է անցներ մանդատար-պետության հովանու տակ (հարցը Ազգերի լիգայի խորհրդում քննարկվել է 1920 թ. ապրիլ-մայիս ամիսներին): Նմանատիպ կարծիք է արտահայտում նաև Մեծ Բրիտանիայի պատվիրակ պրն Ֆիշերը. «Արդյո՞ք մի քանի ամսից ակնհայտ չի լինի, որ Հայաստանի համար ավելի լավ կլիներ ընդունել որևէ պետության մանդատը»<sup>8</sup>: Մրանով նիստը ավարտում է քննարկումը:

Երբ Ազգերի լիգան քննարկում էր Հայաստանի ընդունելության հարցը, Հայաստանը հայտնվեց պատերազմի հորձանուտում: 1920 թ. սեպտեմբերի 23-ի լույս 24-ի գիշերը թուրքական մեծաքանակ ուժերը նոր պատերազմ սամձագերծեցին Հայաստանի Հանրապետության դեմ, որը սկզբից և ուժացավ թուրքական բանակի հաջողություններով<sup>9</sup>. Արդյունքը եղավ այն, որ 1920 թ. դեկտեմբերի 2-ին թուրքերի հետ կնքվեց Ալեքսանդրապոլի պայմանագիրը, որը բավական ծանր պայմաններ էր Ենթադրում հայկական կողմի համար: Ըստ պայմանագրի՝ Հայաստանը հրաժարվում էր նաև Սկրի պայմանագրից: Ավելին՝ նույն օրը կնքվում է նաև մեկ այլ համաձայնագիր Հայաստանի Հանրապետության և Խորհրդային Ռուսաստանի միջև, որով Հայաստանում հաստատվում են խորհրդային կարգեր:

Դեկտեմբերի 3-ին անդամության հարցի քննարկման կիզակետում ստացվում է Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի և Իտալիայի արտգործնախարարների նամակը, որով Ազգերի լիգայում իրենց ներկայացուցիչներին հորդորում էին չընդունել Հայաստանի անդամակցությունը: Դեռագրում մասնավորապես ասված էր. «Լոնդոնում հավաքված ֆրանսիական, իտալական և անգլիական կառավարությունների ներկայացուցիչները, քննարկելով ժնևում բարձրացված Հայաստանի անդամության հարցը, եկան միաձայն եզրակացության, որ անհնար է իրագործել Հայաստանի պա-

<sup>8</sup> **Ա. Եսայան**, Հայկական հարցը և միջազգային դիվանագիտությունը, Եր., 1965, էջ 137:

<sup>9</sup> Մանրամասն տես Է. Զոհրաբյան, 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Եր., 1997:

հանջը: Սկրի պայմանագիրը, որը կազմավորում է Հայաստանը որպես անկախ պետություն, դեռ վավերացված չէ: Ավելին, Հայաստանի սահմանները, որոնք որոշելու հարցը մեծ տերությունները հանձնել էին ԱՄՆ-ի նախագահ Վիլսոնի արբիտրաժային վճռին, այնքան ընդարձակ են գծված, որ ներկա պայմաններում Ազգերի լիգան դժվարությամբ կարող է ընդունել դրանք հարգել տալու վերաբերյալ իր պարտավորությունները»<sup>10</sup>: Իհարկե, այս հեռագիրը Ազգերի լիգայի անդամ-պետությունները միանշանակ չեն ընդունում: Նրանցից ոմանք ընդգուռ են այս թելադրանքի դեմ: Սակայն այս դժգոհությունները մակերեսային բնույթ էին կրում. Երբ հարկ եղավ գործելու, «դժգոհողները» ևս ենթարկվեցին երեք տերությունների կառավարությունների հրահանգներին:

Որպես Հայաստանի անդամության մերժման փաստարկ հեռագիրը մատնանշում էր Սկրի պայմանագրի վավերացրած չլինելու հանգամանքը, որով Հայաստանն իր հոչակվում էր ազատ և անկախ պետություն: Սակայն այս փաստարկը լիովին անհիմն էր, քանի որ Սկրի պայմանագրի 88-րդ հոդվածով Թուրքիան հայտարարում էր, որ ճանաչում է Հայաստանը որպես ազատ և անկախ պետություն, ինչը արդեն արել էին դաշնակից պետությունները<sup>11</sup>: Այսինքն՝ Հայաստանի՝ որպես ազատ և անկախ պետության գոյությունը որևէ կերպ չէր առնչվում Սկրի պայմանագրի հետ, որն իրականում Թուրքիայի հետ հաշոտության պայմանագիր էր: Բացի այդ՝ 1920 թ. օգոստոսի 10-ին Հայաստանը կնքել էր նաև փոքրանասնությունների վերաբերյալ միջազգային պայմանագիրը, որի նախաբանը սկսվում էր հետևյալ կերպ. «Գլխավոր դաշնակից պետությունները մի կողմից և Հայաստանը մյուս կողմից, քանի որ Գլխավոր դաշնակից պետությունները ճանաչում են Հայաստանը որպես ինքնիշխան և անկախ պետություն...»<sup>12</sup>: Այսուղի հարկ ենք համարում ավելացնել նաև Ազգերի լիգայի քաղաքական քաժնի դեկավար Պոլ Մանթուի խոսքերը. «Կասկած չկա, որ Հայաստանը այժմ հանդիսանում է մի պետություն, որը դե ֆակտո և դե յուրէ ճանաչված է այն պետությունների կողմից, որոնք թույլ են տվել վերջինիս ստորագրել Սկրի պայմանագիրը»<sup>13</sup>:

Հայաստանը ստորագրել էր նաև Ազգերի լիգայի կանոնադրությունը, սակայն չէր հայտնվել լիգայի սկզբնական անդամների ցուցակում, ինչպես Լեհաստանը, Չեխոսլովակիան, Քեջազը: Պատճառն այն էր, որ սկզբում որոշված էր Հայաստանը հանձնել մանդատար-պետության հոգատարությանը, ինչի պատճառով Հայաստանը չստորագրեց Վերսալի դաշնագիրը, որով հիմք դրվեց Ազգերի լիգային: Հայաստանը ոչ միայն միակ դաշնակիցն էր, որ չնոտավ Ազգերի լիգայի մեջ, այլև դրվեց Ադրբեյջանի, Վրաստանի, Կոստա-Ռիկայի, Ուկրաինայի հետ նույն հարթակի վրա, որոնք երբեք դաշնակից պետություն չէին եղել և չէին ստորագրել լիգայի կանոնադրությունը:

<sup>10</sup> «Մշակ», օրաբերք, հունվար 29, 1921 թ.:

<sup>11</sup> Տես Poidebard A., Le Transcaucase et la république d'Arménie dans les textes Diplomatiques du traité de Brest-Litovsk au traité de Kars 1918-1921, Paris, 1924, էջ 46-47:

<sup>12</sup> «Հայունիք», ամսագիր, № 2, 1933 թ.:

<sup>13</sup> Բարսեղով ՅՕ., նշվ. աշխ., էջ 532:

Հարկ ենք համարում անդրադառնալ նաև Բալթյան պետությունների անդամության հարցին, քանի որ այս քննարկումների ընթացքում էլ հենց երևան Եկան նախկին Ռուսական կայսրության տարածքի վրա առաջացած պետությունների անդամության մերժման բուն պատճառները: Դեկտեմբերի 4-ին 5-րդ հանձնաժողովը քննարկում է Լյուքսեմբուրգի, Ֆինլանդիայի, Ալբանիայի և Բալթյան պետությունների դիմումները: Բալթյան պետությունների վերաբերյալ Շեխուլովակիայի ներկայացուցիչ Ս. Բենեշը հանձնաժողովի ուշադրությունը իրավիրում է այն փաստի վրա, որ Բալթյան պետությունների անկայուն վիճակը պայմանավորված է Խորհրդային Ռուսաստանով, և կարծիք է հայտնում, որ եթե այս երկրները անդամագրվեն, ապա Ազգերի լիգան կիայտնվի վտանգի առջև: Մատնանշելով Բալթյան և Կովկասյան երկրների նմանությունը՝ Ռ. Սեսիլն առաջարկում է դրանց ընդունելության հարցերը քննարկել համատեղ: Թեև Սեսիլը վտանգավոր էր համարում մերժել այս պետությունների անդամությունը, սակայն, ըստ նրա, այդ երկրները իրենց հարևանությամբ ունեն մի երկիր (նկատի ուներ Ռուսաստանը), որի վրա Ազգերի լիգան չէր կարող գործադրել ո՞չ բարոյական, ո՞չ ռազմական և ո՞չ էլ տնտեսական ճնշում: Ուստի առաջարկում էր ընդունել նրանց Ազգերի լիգայի կամոնադրության 10-րդ հոդվածի վերապահմանը (հոդվածը ենթադրում էր Ազգերի լիգայի անդամ-պետությունների սահմանների պաշտպանություն արտաքին ազրեսիաներից): Պրո Բենեշը առաջարկում է այդ երկրներին բույլ տալ մասնակցելու տեխնիկական հանձնաժողովներին, ինչը հնարավորություն կտար «չիհասթափեցնել վերջիններիս»: Առաջարկված երկու բանաձևերն ել դառնում են բուռն քննարկումների առարկա: Հատկապես 10-րդ հոդվածի վերապահմանով ընդունելը, շատերի կարօքով, կարող էր նախադեալ դառնալ, ինչը ցանկալի չէր նորաստեղծ Ազգերի լիգայի համար: Սակայն միևնույն ժամանակ անհրաժեշտ էր չիհասթափեցնել անդամության հայտ ներկայացրած պետություններին: Ուշագրավ էր նաև Կանադայի ներկայացուցիչ Ռաուելի ելույթը, որը պահպան էր, որ հայտի քննարկումը պահանջում է ռուսական խնդրի ուսումնասիրություն իր բոլոր դրսերումներով, ինչը պատվիրակը կոչ էր անում ազնվորեն ընդունել: Մեկ այլ բանաձև է առաջարկում Բրիտանիայի ներկայացուցիչ Ֆիշերը. «Հարցը վերադարձնել ենթահանձնաժողով՝ նոր ձևաչափ մշակելու համար, որը լրիվ անդամության փոխարեն կապահովի Ազգերի լիգայի հետ պետությունների անխախտ կապը»<sup>14</sup>:

Քննարկումներից հետո ընդունվում է Ֆիշերի առաջարկը՝ հավելելով, որ Բալթյան պետությունների վերաբերյալ նախապատրաստվող գեկույցին գումարվեն նաև Հայաստանը և Վրաստանը: Նշենք, որ նիստը ենթահանձնաժողովների բացասական գեկույցների հիման վրա որոշեց, որ Արդբեջանի և Ուկրաինայի դիմումները Վեհաժողովի քննարկմանը չեն ներկայացվելու:

5-րդ հանձնաժողովի առաջին ենթահանձնաժողովի հերթական նիստը գումարվում է դեկտեմբերի 6-ին, որն ընդունում է հետևյալ բանաձևը. հանձնաժողովը Վեհաժողովին հանձնարում է տեղեկացնել Էստոնիայի, Լատվիայի, Լիտվայի, Վրաստանի և Հայաստանի կառավարություններին.

<sup>14</sup> Сабанин А. Россия и Лига Наций 1920-21-22 гг. М., 1924, с. 44.

ա) անդամության վերաբերյալ նրանց դիմումների քննարկումը դրական արձագանք է ստացել, սակայն հանգամանքները այնպիսին են, որ թույլ չեն տալիս վերջնական որոշման հանգելու,

բ) մինչև Վեհաժողովի վերջնական որոշումը այս պետությունները կարող են մասնակցել Ազգերի լիգայի տեխնիկական հանձնաժողովներին, որոնք ընդհանուր հետաքրքրություն են ներկայացնում<sup>15</sup>:

Յենց այս բանաձևն էլ որպես լրացուցիչ գեկույց ներկայացվում է 5-րդ հանձնաժողովի դեկտեմբերի 9-ի նիստին, որտեղ քննարկումներն ավելի ակնհայտ են դարձնում Ազգերի լիգայում Կովկասյան և Բալթյան պետությունների ճակատագրում բոլշևիկյան Ռուսաստանի խաղացած դերը: Նիստի ժամանակ Ռոբերտ Սեսիլը կրկին խոսք է բացում Ազգերի լիգայի կանոնադրության 10-րդ հոդվածի մասին: Սակայն արդյո՞ք այդ բազմաչարչար 10-րդ հոդվածը վերաբերում էր հենց անմիջական օգնություն տրամադրելուն: Կարծում ենք՝ ոչ, ինչը կփորձենք հիմնավորել: Նախ, բառացիորեն մեջբերենք հոդվածն ամբողջությամբ. «Ազգերի լիգայի անդամները պարտավորվում են հարգել և արտաքին ազրեսիայից պաշտպանել Ազգերի լիգայի բոլոր անդամների տարածքային ամբողջականությունը և առկա քաղաքական անկախությունը: Ազրեսիայի կամ ազրեսիայի վտանգի դեպքում խորհրդարձ պետք է նատնամշի այն միջոցները, որոնք կրերեն այս պարտավորությունների իրականացմանը»<sup>16</sup>: Ինչպես տեսնում եք, 10-րդ հոդվածը որևէ կոնկրետ միջոց (հատկապես ռազմական) չէր ենթադրում արտաքին ազրեսիայից պաշտպանելու հարցում: 10-րդ հոդվածի հիմնական նպատակն էր ամրագրել տարածքային ամբողջականության և քաղաքական անկախության սկզբունքները: Շարունակենք Ազգերի լիգայի կանոնադրության ուսումնասիրությունը: Յոդված 11-ը հայտարարում էր. «Յուրաքանչյուր պատերազմ կամ պատերազմի սպառնալիք, որը անմիջականորեն ազդում է կամ չի ազդում Ազգերի լիգայի անդամ պետությունների վրա, հոչակվում է որպես Ազգերի լիգայի գործառույթ, և վերջինս պետք է գործողություններ ծերնարկի, որոնք խելացի և արդյունավետ կլինեն և կապահովեն ազգերի խաղաղությունը: Այս դեպքում անդամ-պետությունների պահանջով Գերագույն խորհրդարձ պետք է Ազգերի լիգայի խորհրդի նիստ գումարի: Յուրաքանչյուր անդամի իրավունքն է Վեհաժողովի կամ Խորհրդի ուշադրությունը հրավիրել այն հանգամանքների վրա, որոնք ազդում են միջազգային հարաբերությունների, միջազգային խաղաղության կամ ազգերի միջև բարիդրացիական հարաբերությունների վրա, ինչից էլ կախված է միջազգային խաղաղությունը»<sup>17</sup>: Ինչպես հստակ երևում է վերոհիշյալ հոդվածից, Ազգերի լիգան պարտավորվում էր միջամտել միջազգային խաղաղությանը սպառնացող յուրաքանչյուր դեպքի ժամանակ: Սակայն արդար լինելու համար պետք է նշել, որ թե՛ 10-րդ և թե՛ 11-րդ հոդվածները զուրկ էին գործնական նշանակությունից, քանի որ իրական ազդեցության լծակներ կամ միջոցներ չեն ենթադրում: Ազգերի լիգայի հնարավոր պատժամիջոցներին էր վերաբերում 16-րդ հոդվածը, որը առևտրական, տնտեսական, ֆինանսական և այլ արգելքներ էր նախատեսում պատերազմ սանձազերծած պետության դեմ:

<sup>15</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 45:

<sup>16</sup> ՀԱՍ, ֆ. 412, գ. 1, գ. 2286, տե՛ս նաև՝ Կոլյսկի Ա., նշվ. աշխ., էջ 32:

<sup>17</sup> ՀԱՍ, ֆ. 412, գ. 1, գ. 2286:

«Այս դեպքում խորհուրդը գործին առնչվող կառավարություններին պետք է խորհուրդ տա, թե ռազմական, ծովային կամ օդային ինչպիսի ուժեր պետք է կիրառվեն՝ Ազգերի լիգայի կանոնադրությունը պաշտպանելու համար»<sup>18</sup>: 17-րդ հոդվածով 16-րդ հոդվածը տարածվում էր նաև ոչ անդամ պետությունների վրա: Նշենք, որ 10-րդ հոդվածի բովանդակությունը, նրա իրական հնաստը հուզում էր նաև Ազգերի լիգայի անդամներին, որոնք միանշանակորեն չէին կարողանում մեկնաբանել այն: 1920 թ. Ավստրիայի անդամության հարցի հետ կապված 5-րդ հանձնաժողովը հետևյալ կերպ է բացատրում 10-րդ հոդվածի բովանդակությունը. «10-րդ հոդվածը ապահովում է Ազգերի լիգայի անդամ յուրաքանչյուր երկրի տարածքային ամբողջականությունը: Այն միտված է դատապարտելու արտաքին ագրեսիաները, որոնք նպատակ են հետապնդում խախտել անդամ-պետությունների տարածքային ամբողջականությունը և քաղաքական անկախությունը, որոնք կարող են կոչ ուղղել Ազգերի լիգայի խորհրդին՝ միջոցներ ձեռնարկել ագրեսիաներին դիմակայելու համար»<sup>19</sup>: Այս պարտավորության կատարումը ապահովելու նպատակով խորհուրդը որոշ միջոցներ էր առաջարկում, որոնք ձևակերպված էին Ազգերի լիգայի կանոնադրության 11-17-րդ և 19-րդ հոդվածներում: Սակայն պետք է նշել, որ այս հոդվածներից և ոչ մեկը պարտադիր ռազմական գործողություններ չեն ենթադրում, և պաշտպանության բնագավառում միջոցների ընտրության հարցը թողնում էր խորհրդի հայեցողությանը: Բացի այս, Ազգերի լիգան չուներ միջազգային գինված ուժեր, և այս հանգամանքը հենց սկզբից անհնարին էր դարձնում ռազմական միջամտության յուրաքանչյուր հնարավորություն: Իսկ ռազմական արշավանք կազմակերպելու մասին խորհրդի ոռոշման դեպքում յուրաքանչյուր պետություն ինքը կամովին պետք է զորք տրամադրեր (դժվար է պատկերացնել, որ որևէ պետություն ինքնական կդիմեր այդ քայլին): Այսպիսով՝ 10-րդ հոդվածի պարտավորություններից ելնելով չեր, որ Ազգերի լիգան մերժեց Հայաստանի ընդունելության հարցը:

Վերադարձնանք դեկտեմբերի 9-ի նիստին: Իրավիճակը ճիշտ գնահատելու համար անհրաժեշտ է ներկայացնել նաև Պարսկաստանի ներկայացուցիչ Եմիր Զոկա-Էդ-Պաուլեհի ելույթը, որը կողմ է արտահայտվում Վրաստանի անդամությանը՝ նշելով, որ վերջինս և՛ ռասսայական, և՛ սովորույթների առումով տարբեր է Ռուսաստանից (այսինքն՝ վտանգը ավելի քիչ է, որ Վրաստանը կդառնա բոլշևիկյան): Բավականին բաց տեքստով է խոսում նաև Կոլումբիայի ներկայացուցիչ Ռեստրեպոն, որը կարծում էր, որ Ռուսաստանին սահմանակից պետություններին ընդունելով որպես անդամ, ավելի հեշտ կլիներ պայքարել բորշչեկների դեմ:

Երկար քննարկումներից հետո 5ա ենթահանձնաժողովի առաջարկած բանաձևն ընդունվում է Բալթյան պետությունների և Վրաստանի նկատմամբ, ինչը, ըստ հանձնաժողովի նախագահի, Բալթյան և Կովկասյան պետություններին հաջորդ տարի անդամության նոր դիմում ներկայացնելու հնարավորություն կստեղծեր: Իսկ ինչ վերաբերում էր Հայաստանին, ապա բանաձևն ընդունվում է մեծ դժվարությամբ, որի պատճառը դեկտեմբերի 3-ի վերոնշյալ հեռագիրն էր:

<sup>18</sup> ՀԱԱ, ֆ. 412, գ. 1, գ. 2286:

<sup>19</sup> Mandelstam A., նշվ. աշխ., էջ 125-126:

Նիստի ընթացքում քննարկվում է նաև տեխնիկական հանձնաժողով-ներին պետությունների մասնակցության հարցը, որով Ազգերի լիգայի անդամ պետությունները նպատակ էին հետապնդում վերջնականապես չխցել կապերը Կովկասյան և Բալթյան պետությունների հետ, նրանց պահել «իրենց կողքին»՝ հետևելու վերջիններիս հետագա ճակատագրին (այսինքն՝ Ռուսաստանի հետ նրանց հարաբերությունների հետագա զարգացմանը): Սա մի գործողություն էր, որով Ազգերի լիգան ձգտում էր հանդգել Կովկասյան և Բալթյան պետություններին, որ դրականորեն է վերաբերվում նրանց անդամությանը, որը պարզապես ժամանակի խնդիր է: Ազգերի լիգան, փաստորեն, միանգամից երկու խնդիր էր լուծում. մի կողմից ժամանակ էր շահում՝ դեպքերի հետագա ընթացքին հետևելու և ճիշտ կողմնորոշվելու համար, իսկ մյուս կողմից այդ պետություններին պահում էր իր տեսադաշտում:

Մրանով 5-րդ հանձնաժողովը ավարտում է իր աշխատանքը, և պատրաստված գեկույցը ներկայացվում է Վեհաժողովի քննարկմանը: Վերջինս նոր անդամների ընդունելության հարցին անդրադառնում է 1920 թ. դեկտեմբերի 15-ին: Թեև Հայաստանի անդամակցության հարցը դրված էր դեկտեմբերի 16-ին կայանալիք նիստի օրակարգում, սակայն հարկ ենք համարում անդրադառնալ նաև առաջին օրվա քննարկումներին: Բենեշի ելույթից մեջբերում ենք Բալթյան և Կովկասյան պետություններին վերաբերող հատվածը. «Ես միայն ցանկանում եմ ուշադրություն հրավիրել այն հանգամանքի վրա, որ Ազգերի լիգան դեռևս շատ թույլ կազմակերպություն է, և ննան պայմաններում որոշ փոքր պետությունների մուտքը շատ նուրբ խնդիր է, քանզի նրանց մի քանիսի դրությունը շատ ծանր է: Իրադրությունը աղոտ է նաև Եվրոպայի որոշ հատվածներում, և մենք չգիտենք, թե արդյո՞ք վաղը չեն ծագի նոր դժվարություններ և խնդիրներ, որոնք այդ պետություններին կներքաշեն անկարգությունների հորձանությը»<sup>20</sup>: Բենեշի ակնարկը ավելի քան ակնհայտ էր: Մեջբերենք նաև Պարսկաստանի ներկայացուցչի ելույթից. «Տարածայնություններ եղան Հայաստանի, Ադրբեյջանի և Ուկրաինայի հարցում, որոնք, ցավոք, չունեն հստակ սահմանագծված սահմաններ և կայուն կառավարություն: Նրանք չեն բավարարում լիգայի անդամության պահանջներին, սակայն հույս ունենք, որ կզա այն օրը, երբ հնարավոր կլինի նաև նրանց անդամությունը»<sup>21</sup>: Իսկ ի՞նչ ընդհանրություն ունեին այս երեք պետությունները. խորհրդային կարգերի առկայությունը:

Բալթյան և Կովկասյան երկրների ընդունելության հարցը քննարկվում է Վեհաժողովի դեկտեմբերի 16-ի նիստում<sup>22</sup>: Դրական լուծում տալով Ֆինլանդիայի, Լյուքսեմբուրգի, Կոստա-Ռիկայի անդամության հայտերին (5-րդ հանձնաժողովը արտահայտվել էր հօգուտ սրանց ընդունելությամ)` Վեհաժողովի նիստը ծեռնամուխ է լինում այն պետությունների հարցերի քննարկմանը, որոնց անդամությունը 5-րդ հանձնաժողովը հնարավոր չէր համարել և առաջարկել էր նրանց մասնակցությունը միայն տեխնիկական հանձնաժողովների աշխատանքներին: Օրակարգում առաջինը դրված էր

<sup>20</sup> Սաբանին Ա., Աշվ. աշխ., էջ 47:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 49:

<sup>22</sup> Տե՛ս LNA, League of Nations, the Records of the First Assembly Plenary Meetings.

Հայաստանի հարցը, որի վերաբերյալ գեկույցը ներկայացնում է ֆ. Նանսենը: Նա հատկապես նշում է, որ հանձնաժողովը մեծ ցանկություն ուներ Հայաստանը տեսնելու որպես Ազգերի լիգայի անդամ, սակայն հանգամանքները այնպիսին են, որ դա անել հնարավոր չէ, որովհետև երկրի սահմանները որոշված չեն, կառավարությունը կայուն համարվել չի կարող, պետությունը ծանր կացության մեջ է: Նա բարձրացնում է նաև Սկրի պայմանագրի վավերացված չլինելու խնդիրը որպես խոչընդոտ Ազգերի լիգային՝ Հայաստանի անդամակցելու համար: Այնուհետև ելույթ է ունենում Ռառուելը (Կանադա), որը ևս մատնաշում է այն երկու հիմնական դժվարությունները, որոնք ընկած են Հայաստանի ընդունելության ճանապարհին (սահմանները և կառավարության անկայունությունը): Ազգերի լիգայի անդամներն այն կարծիքին էին, որ Հայաստանի վերաբերյալ բանաձևը պետք է ինչ-որ կերպ ավելին լիներ, քան Բալթյան պետությունների վերաբերյալ ընդունած բանաձևը: Որոշվում է, որ այդ առավելությունը պետք է, ինչպես միշտ, արտահայտվեր խոսքերով: Հայաստանի վերաբերյալ ընդունվում է Ռառուելի առաջարկած լրացումը, որը միաժամանակ վերաբերում էր թուրք-հայկական պատերազմի շուրջ Ազգերի լիգայում ընթացող քննարկումներին. «Վեհաժողովն անկեղծորեն հույս ունի, որ ԱՄՆ նախագահի ջանքերը, որոնք եռանդուն կերպով պաշտպանություն են ստացել Խապանիայի և Բրազիլիայի կառավարությունների և Ազգերի լիգայի խորհրդի կողմից, կօգնեն պահպանելու հայ ազգը և կապահովեն կայուն կառավարության հաստատումը Երկրում, որն իր իշխանությունը կիրականացնի հայկական ողջ պետության սահմաններում, որոնք վերջնականապես կարող են հաստատվել Սկրի պայմանագրով, այն նկատառումով, որ Վեհաժողովը կարողանա իր հաջորդ նիստի ժամանակ ընդունել Հայաստանը որպես Ազգերի լիգայի լիիրավ անդամ»<sup>23</sup> (հայ-թուրքական պատերազմը դադարեցնելու ուղղությամբ ԱՄՆ, Խապանիայի և Բրազիլիայի կառավարություններն իրենց աջակցությունն էին հայտնել հանդես գալու որպես միջնորդ): Այնուհետև Հայաստանի Հանրապետության անդամության հարցը դրվում է քվեարկության և մերժվում է 21 ձայնով՝ ընդդեմ 8-ի: Կողմ են քվեարկում 8 պետություն՝ Կանադա, Պերու, Պորտուգալիա, Ռումինիա, Սալվադոր, Շվեյցարիա, Ուրուգվայ, Վենեսուելա, դեմ՝ Ավստրալիա, Բոլիվիա, Բրազիլիա, Բրիտանական Կայսրություն, Դանիա, Իտալիա, Խապանիա, Կոլումբիա, Կուբա, Հարավայլիա, Հունաստան, Հնդկաստան, ճապոնիա, Նիդերլանդներ, Նորվեգիա, Նոր Զելանդիա, Շվեյցիա, Չիլի, Պանամա, Պարագվայ: Զեռնպահ կան բացակա էր 13 ներկայացուցիչ<sup>24</sup>:

Այնուհետև Վեհաժողովը ձեռնամուխ է լինում տեխնիկական հանձնաժողովներին Հայաստանի անդամակցության հարցի քննարկմանը: Պարզվում է, որ Հայաստանին օգնելու ցանկությամբ «ստոգորված» Ազգերի լիգան կասկածներ ունի անգամ այս հարցում: Բրիտանական Կայսրության ներկայացուցիչ Բարնեսը տեխնիկական կազմակերպություններին Հայաստանի մասնակցության վերաբերյալ հանձնաժողովի բանաձևը որակում է որպես Ազգերի լիգայի անդամների խիզը հանգստացնելու միջոց, որը, ըստ Էռ-

<sup>23</sup> LNA, League of Nations, the Records of the First Assembly Plenary Meetings.

<sup>24</sup> Տես «Մշակ», օրաթերթ, հունվար 29, 1921 թ.:

թյան, ոչինչ չէր նշանակում: Որբերտ Սեսիլը ներկաների ուշադրությունը հրավիրում է այն բանի վրա, որ մասնագիտական կազմակերպություններին և Աշխատանքի միջազգային բյուրոյին մասնակցելու հնարավորությունը ինչ-որ կերպով կարող է մեղմել Հայաստանի վիճակը: Սեսիլը առաջարկում է որոշակի առավելություն տալ Հայաստանին՝ նրան հնարավորություն ընձեռնելով Վեհաժողով ուղարկել իր ներկայացուցչին, որը հնարավորություն կունենար հատուկ դեպքերում հանդես գալու նիստերի ժամանակ: Ըստ նրա՝ Ռազմական առաջարկած բանաձևը չնչին առավելություն էր տալիս Հայաստանին: Ավստրալիայի ներկայացուցիչ Միլլենը հարց է բարձրացնում, թե արդյոք ճի՞շտ է, որ անդամության հայտ ներկայացնելուց հետո Հայաստանի կառավարությունը տապալվել է, և իշխանությունն անցել է խորհրդային կառավարությանը, որը ճանաչվել է Ռուսաստանի կողմից:

Ինչպես գիտենք, Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվել էին դեռևս 1920 թ. դեկտեմբերի 2-ին, իսկ Ազգերի լիգայում Հայաստանի անդամակցության հարցի քննարկման ողջ ընթացքում այդ մասին բացահայտ ոչինչ չի ասվել, կարծես ոչինչ տեղի չէր ունեցել: Բրիտանիայի ներկայացուցիչն առաջարկում է բաց ժողովում տեխնիկական կազմակերպություններին Հայաստանի անդամակցության հարցը և անցնել օրակարգի մյուս խնդիրներին՝ պատճառաբանելով, որ հարցի դրական լուծումը կեղծիք կլինի, իսկ բացասականը՝ ապտակ հայ ժողովրդի համար<sup>25</sup>: Քվեարկությունից խուսափելու միակ միջոցը քննարկումը դադարեցնել էր, և նման ձևով կարելի էր ազատվել այդ դժվար հարցից: Ֆրանսիայի պատվիրակն առաջարկում է հարցը վերադարձնել 5-րդ հանձնաժողովը, քանի որ, ինչպես ինքն էր պնդում, որքան էլ Ազգերի լիգան խորահարությանը վերաբերվեր Հայաստանին, կար նի փաստ, որի մասին իրենք բավականաչափ տեղեկացված չէին. «...արդյո՞ք Հայաստանը կլանված է Սովետների կողմից, թե՝ ոչ»<sup>26</sup>: Քվեարկությամբ որոշվում է ընդունել այս առաջարկը և տեխնիկական կազմակերպություններին Հայաստանի մասնակցության հարցը հանձնել 5-րդ հանձնաժողովին: Հստակեցնելու համար նշենք, որ 5-րդ հանձնաժողովը իր աշխատանքներն ավարտելու էր դեկտեմբերի 18-ին՝ Վեհաժողովի հետ համատեղ, այսինքն՝ ընդամենը 2 օր հետո<sup>27</sup>: Ակնհայտ է, և Վեհաժողովի անդամներն իրենք ել քաջ գիտակցում էին, որ 2 օրվա ընթացքում 5-րդ հանձնաժողովը չէր կարող որևէ որոշում կայացնել: Բացի այդ, 2 օրում չէր վերանալու գլխավոր արգելքը. խորհրդային կարգերը Հայաստանում չէին տապալվելու:

Այս մերժումից հետո Վեհաժողովը ձեռնամուխ է լինում Ռազմական Վերոնշյալ առաջարկի քննարկմանը: Վեհաժողովը նտահոգ էր, որ տեղյակ չլինելով Հայաստանում կատարվող իրադարձություններին՝ կարող է ծիծառելի դրության մեջ հայտնվել՝ առաջարկելով ԱՄՆ-ի միջնորդությունը ռազմական գործողությունները դադարեցնելու նպատակով: Սակայն Ռազմական հաջողվում է պաշտպանել իր առաջարկը: Ըստ նրա՝ եթե նույնիսկ Հայաստանում արդեն հաստատվել էին խորհրդային կարգեր, առավել ևս անհրաժեշտ էր օգնել հայերին՝ կայուն կառավարություն ստեղծե-

<sup>25</sup> Տե՛ս LNA, League of Nations, the Records of the First Assembly Plenary Meetings:

<sup>26</sup> Ա. Եսայան, նշվ. աշխ., էջ 150:

<sup>27</sup> Տե՛ս Բարսեղով ՅՕ., նշվ. աշխ., էջ 609-615:

լու գործում: Նիստը քվեարկում է հօգուտ այս առաջարկի՝ դրանով ավարտելով Հայաստանի Հանրապետության անդամության հարցի քննարկումը Ազգերի լիգայի Վեհաժողովի առաջին նստաշրջանում:

Կովկասյան և Բալթյան պետությունների անդամակցության հարցի քննարկումների մասին նշենք, որ Վրաստանին և Բալթյան պետություններին թույլ տրվեց ճանակցել տեխնիկական կազմակերպությունների աշխատանքներին: Վրաստանի հանդեպ այս վերաբերնունքի մասին Փարիզում Վրաստանի ազգային պատվիրակության նախագահ Ավալովը գրում է. «1920 թ. նայիս 7-ին Ռուսաստանը ճանաչել էր Վրաստանը, այդ պատճառով լիգան կարծում էր, թե Ռուսաստանը չի հարձակվի Վրաստանի վրա, և այդ պատճառով էլ Վրաստանի կողմնակիցները ավելի շատ էին»<sup>28</sup>: Սակայն Վրաստանում նույնպես 1921 թ. սկզբին հաստատվեցին խորհրդային կարգեր՝ դրանով իսկ զրկելով Ազգերի լիգայի վեհաժողովի II նստաշրջանում Վրաստանի անդամության հարցը դրական լուծելու հնարավորությունից: Իսկ ահա Բալթյան պետությունները, որտեղ խորհրդային կարգերը հաստատվեցին ավելի ուշ, 1921 թ. դարձան Ազգերի լիգայի անդամներ:

Այսպիսով՝ ակնհայտ էր, որ Հայաստանի դիմումը բավարարում էր Ազգերի լիգայի կանոնադրության առաջադրած բոլոր պահանջներին: Այս հանգամանքը ապացուցում էր նաև 5-րդ հանձնաժողովի երրորդ ենթահանձնաժողովի գեկույցը, որը դրական էր արձագանքել Հայաստանի անդամակցության դիմումին:

Չնայած Ազգերի լիգայի անդամ պետությունների ապավիրակները բացահայտորեն չին նշում Հայաստանի անդամության մերժման հարցում խորհրդային Ռուսաստանի դերը, սակայն դեպքերի մանրանասների ուսումնասիրությունը երկանութելու տեղիք չի թողնում: Իրավիճակը ճիշտ հասկանալու համար պարզապես անհրաժեշտ էր համատեղ ուսումնասիրել Կովկասյան և Բալթյան պետությունների անդամության դիմումների ճակատագրերը: ԱՄ նախագահ Վուլֆը Վիլսոնը, անդրադառնալով այս պետությունների խնդրին, նշել է, որ դրանց ճակատագրի հարցը պետք է լուծվի Ռուսաստանի հետ, քանի որ դրանք կազմում են ռուսական խնդրի բաղկացուցիչ մասը<sup>29</sup>: Ակնհայտ է, որ ամերիկյան նախագահը գիտակցում էր, որ Ռուսաստանը չի հրաժարվի նախկինում Ցարական Ռուսաստանի մաս կազմած պետություններից: Այս փաստը գիտակցում էին նաև Ազգերի լիգայում: Մի կողմից անհրաժեշտ էր հաշվի նստել սրա հետ, մյուս կողմից՝ պաշտպանվել բոլշևիկյան վտանգից: Մրանով էր պայմանավորված Ազգերի լիգայի քաղաքականությունը նաև Հայաստանի հարցում: Հայաստանի վերաբերյալ ճշնարտությունն այն էր, որ դեկտեմբերի 2-ի լույս 3-ի գիշերը կնքվել էր Լեզուան-Դրո հանաձայնագիրը, որով Հայաստանում հաստատվել էին խորհրդային կարգեր: Փաստորեն՝ Ադրբեյջանից և Ուկրաինայից հետո Հայաստանը երրորդն էր, որտեղ հաստատվեցին խորհրդային կարգեր: Արդյունքը եղավ այն, որ Հայաստանը, ի տարբերություն Վրաստանի և Բալթյան պետությունների, չնդունվեց Ազգերի լիգայի անգամ տեխնիկական հանձնաժողովների կազմում: Անփոփելով Հայաստա-

<sup>28</sup> **Ավալօվ Յ.** Независимость Грузии в международной политике, Париж, 1924, с. 298.

<sup>29</sup> Stéphane Bruguet P., Le Républic Caucasus et La League. Les Nations opprimes et la Société des Nations, Paris 1938,էջ 19-20:

նի ու Վրաստանի ընդունելության հարցերի քննարկումը՝ նշենք, որ Հայաստանի ընդունելության օգտին (որի համար բազմաթիվ չերմ խոսքեր էին ասվել) ավելի քիչ ձայներ եղան, քան Վրաստանի:

Ինչ վերաբերում էր Թուրքիայի դերին, ապա գտնում ենք, որ այն, ըստ էռության, էական նշանակություն չի ունեցել Հայաստանի անդամության հարցը մերժելու գործում: Հայ-թուրքական պատերազմի վերաբերյալ քննարկումները Ազգերի լիգայի Վեհաժողովում ընթանում էին անդամության հարցից տարանջատված՝ պահպանելով լոկ փոխկապակցվածության արտաքին տպավորությունը: Ավելի համոզիչ լինելու համար հիշեցնենք, որ թուրք-հայկական պատերազմը սկսվել էր դեռևս սեպտեմբերի 24-ին և հենց սկզբից պատերազմի ընթացքը հօգուտ Թուրքիայի էր: Անդամության հարցի քննարկման օրերին (նոյեմբեր-դեկտեմբեր) ակնհայտ էր, որ Թուրքիան հաղթելու է: Նույնիսկ ավելին, հնարավոր էր, որ պատերազմի հետևանքով Հայաստանն այլևս դադարեր գոյություն ունենալուց: Հետևաբար, եթե Հայաստանի ընդունելության հարցի մերժումը կապված լիներ Թուրքիայի հետ, ապա 5-րդ հանձնաժողովը հենց սկզբից բացասական պատասխան կտար:

Որ Ազգերի լիգան հակված էր ընդունելու Հայաստանին որպես անդամ, ապացուցում են փաստերը: Օրինակ, հոկտեմբերի 22-ին Ազգերի լիգայի խորհրդի նախագահ Յունանահ տանը, որտեղ հրավիրված էին բոլոր պատվիրակությունները, հայկական պատվիրակության նախագահ Ավ. Ահարոնյանի հետ գրույցի ժամանակ և՝ Յունաստանի դեսպանը, և՝ Ազգերի լիգայի գլխավոր քարտուղար Երիկ Դրումնոնդը, և՝ II քարտուղար Մանթուն հայտարարում են, որ Հայաստանը առանց որևէ առարկության կընդունի Ազգերի լիգայի անդամականությունը՝ ի տարբերություն անդամության հայտ ներկայացրած մյուս պետությունների, Ազգերի լիգան Հայաստանի Հանրապետության պատվիրակությանը հրավիրել էր մասնակցելու Ազգերի լիգայի կազմակերպած ֆինանսական և տնտեսական կոնֆերանսի աշխատանքներին (կոնֆերանսը տեղի է ունեցել Բրյուսելում 1920 թ. սեպտեմբերի 24-ից հոկտեմբերի 8-ը)<sup>30</sup>: Հայկական կողմը ևս համոզված էր, որ իր դիմումը դրական արձագանք է ունենալու: Այդ են վկայում Հայաստանի Հանրապետության կառավարությանն ուղղված բազմաթիվ հեռագրերը, որտեղ Ավ. Ահարոնյանը խնդրում էր պատվիրակներ նշանակել Ազգերի լիգայում, քանի որ «մեր անդամության հարցը արդեն լուծված է»<sup>32</sup>:

**ЭДИТА ГЗОЯН – *Меры, предпринятые Республикой Армения для вступления в Лигу Наций (1920).*** – Первая мировая война открыла новую страницу в истории межгосударственных отношений. Окончание военных действий ознаменовалось созданием первой международной организации, которая ставила целью предотвратить войны и установить мир. Желание вступить в Лигу Наций выразили практически все страны, и Армения не стала исключением.

<sup>30</sup> Տե՛ս Ավ. Ահարոնյան, Սարդարապատից մինչև Սկը և Լոզան, բաղաքական օրագիր, Եր., 2001, էջ 98:

<sup>31</sup> Տե՛ս LNA, International Financial Conference in Brussels, Reports of the Conference.

<sup>32</sup> ՀԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 2082, 2093:

Когда выяснилось, что предоставить Лиге Наций мандат на Армению невозможно, правительство РА подало заявку на полное членство в этой международной организации, вызвав бурные дебаты её членов. В них отразились двойственные взгляды на обязательства, которые Лига брала на себя, а также неоднозначная, подчас и радикально негативная реакция на фактор Советской России. Отказ принять Армению в Лигу Наций показал, что последняя неспособна решать подобные проблемы и, рассматривая заявки на вступление в свой состав, прибегала к политике двойных стандартов.

**EDITA GZOYAN – *Measures Taken by the Republic of Armenia for the Membership of the League of Nations (1920)*.** – The end of the World War I opened a new page in international relations. The creation of the League of Nations was aimed at establishing and maintaining peaceful relations among nations. The whole international community hurried to become a member of the League of Nations; the Republic of Armenia was not an exception.

When the issue about turning Armenia into a mandate seemed impossible, Armenian politicians applied for full membership of the League of Nations. The request sparked a series of heated debates which reflected uncertainty about the extent of (especially defensive) obligations between member states and how to deal with the consequences of the Russian Revolution. Although in the end Armenia was not accepted into the League, the discussions displayed many of the uncertainties experienced by statesmen as they began adjusting to a new way of practicing international relations.